

ԾԱՂԻԿ Զարաթը երկու անգամ կը հրատարակուի Զորքը-
շաբթի եւ Շաբաթ օրերն : —
տարեկան բաժանորդագրութեան
դիմն է 100 զրուշ արծաթ : —
Վեցամսեայն 50 . — Գաւառաց
հոմար 115 զրուշ . — Վեցամ.
սեայ 60 . — Ծանուցման տողը
5 զրուշ :

ԽՄԲԱԳԻՐ
Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ



Որ եւ է նամակ կամ գրութիւն
պէտք է ուղղել ,

Առ Արտոնատէր և Տնօրէն
ԱՆՏՕՆ ՍԱՔԱՅԵԱՆ
Իսկի Զապթիյէ Ճատտէսի
Նշան ԷՖ. Պերպերեանի Տպա-
րանն :

Խմբագրութեան յանձնաւած
գրութիւնք ետ չեն տրուիր :

ԱՐՏՕՆԱՏԵՐ
ԱՆՏՕՆ ՍԱՔԱՅԵԱՆ

40 ՓԱՐԱ

ՀԱՆԴԵՍ

ՓԱՐԱ 40

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Զ Ա Ղ Ա Զ Ա Կ Ա Ն

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Աղգային Տեսութիւն (Գործ և արդիւնք) —
Վերջին տեսութիւն Աղգ. Հիւանդանոցի . —
Նորապէս Շի. մի մը շուրջ — Վաճառքի յԱղ-
րիական . — Խնդակ ուղղութեամբ համար —
Երկնային վիճակ (Տ. Լա-Բանայի) . — Հա-
լէպ օտաւ ըստ արշըն պոչնոտ . — Վիպա-
սանութիւն՝ Անիծեալ աղջիկը . — Ծանուց-
մունք :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳՈՐԾ ԵՒ ԱՐԴԻՒՆՔ

Ծաղիկի վերջնութեւր թուով խօսե-
ցանք 1888—89 և 1889—90 ամաց
Ելմտացոյցի ծախուց Գլխին մէջ Աղ-
գային Ժողովոյ ծախուց յատկացեալ
20,000 զրշի վարկին վրայ , զոր . Ել-
մտացոյցի Գլխին թանձնաժողովն կ'ա-
ռաջարկէ : չենք գիտեր ինչ տեսու-
թեամբ . 24,000ի բարձրացնել : մինչ-
դեռ , ըստ մեր կատարած մանրամասն
քննութեան , 20,000 զրուշն իսկ շատ
— չըսենք շուայութիւն — աւելի է :

Այժմ անցնինք նոյն թուականաց
Ելմտացոյցի ծախուց Գլխին մէջ կըր-
թական ծախք անուամբ նշանակեալ
20,000 զրուշ վարկին , քնադատու-
թեանը :

կրթական ծախք կոչուածն , որ-
պէս կ'ըմբռնենք , և որպէս կը տրա-
մադրէ Սահմանադրութիւնն , յատ-
կացեալ պէտք է լինի կարօտեալ վար-
ժարանաց , բազմամեայ և օգտակար
ժառանգութեամբք վկայեալ կարօտ
վարժապետաց և արդիւնաւոր հեղի-
նակաց նպաստելու :

Այս տեսութեամբ , նշանակեալ
գումարն անշուշտ խիստ քիչ է , բայց
իրողութիւնն այն է թէ նոյն գումար-
ին 13,200 զրուշն յատկացեալ է կըր-
թական տեսչի տարեկան թոշակին և
մնացեալն մի քանի անձանց իբր նը-
պաստ , որոյ մանրամասնութիւնն թը-
ւել աւելորդ կը համարենք :

Դիտելի է նախ զի Պոլսոյ ընդհա-
նուր վարժարանաց համար միայն մէկ
կրթական տեսուչ կարգելն բաւական
չէ , վասնոր կարելի չէ որ — ո՛վ ո՛ք ալ
լինի այդ պաշտօնեայն — կարենալ
հասնել գրեթէ 40է աւելի վարժարա-
նաց և խնամեալ հսկողութիւն ի գործ
դնել , եթէ այդ պաշտօնեայ լինի նաև
Ժիր ու գործունեայոք : Թո՛ղ թէ
1,100 զրշի ամսականին հետ իր վրայ
նաեւ երթեւեկութեան ծախքն՝ որով
բաւական չէ խղճմտութեամբ կատա-
րելու զիւր պաշտօն , մինչդեռ հասա-
րակ դպրոցի մը տեսուչն կ'ստանայ
գրեթէ նոյնքան ամսական(1) ,

(1) Կըսուի հաւասար կերպով թէ ընդհ. վարժարանաց Կրթական Տեսուչ ԷՖ. Նաին

Ընդհանուր վարժարանաց տեսու-
թեան պաշտօնն եթէ երբէք կարեւո-
րութիւն մ'ունի յանձին կարող , Ժիր
և գործունեայ պաշտօնէութեան ,
պէտք կըլլայ գէթ առ նուազն երկու
անձ յատկացնել այդ պաշտօնին՝ իւ-
րաքանչիւրին վճարելով գէթ 1,500
զրուշ ամսաթոշակ :

Սոյն պայմանաւ միայն կարելի է
Պոլսոյ ընդհ. վարժարանաց վրայ խը-
նամեալ և խղճամիտ հսկողութիւն ի
գործ դնել , ի հարկէ նախապէս և
անհրաժեշտապէս իբր պարտաւորիչ
հաստատելով ի վարժարանն խնամեալ
նախակրթութիւն և կեդրոն թաղերու
վարժարաններն վերածելով ուսումնա-
րանաց կամ կեդրոնական վարժարա-
նի , զոր օրինակ , Մայր-եկեղեցւոյ
Պէգճեան , Սամաթիոյ Ս. Սահակեան ,
Բերայի Նարեկեան , Պալատու Խորէն-
եան , Պէշիկթաշի Մաքրուհեան և Իւս-
կիւտար Ս. Խաչ [Թաղի վարժարաններն ,
իսկ Գատը-գիւղի Արամեան երկսեռ
վարժարանն արդէն երկրորդական վար-
ժարանի ընթացք ունի :

Ահաւորիկ ասոնք են մեր դիտու-
ղութիւնք վերաբերմամբ կրթական
ծախուց վարկին :

Եւ երբ կը խօսինք վարկի վրայ ,

իւր քառամեայ պաշտօնավարութեան մի-
ջոցին հաղիւ թէ միջոյ ո նեցած է մէկ ան-
գամ Աղգ. Հիւանդանոցի Որդանոց — վար-
ժարանն իբր քառորդ ժամ մը այցելութիւն
ընելու :

պարտինք դիտել տալ այս առթիւ թէ Ազգ. Ժողովը երբ կը քուէարկէ Եւմտացոյցը, հարկ է որ խնամեալ ուշադրութիւն մատուցանէ իւրաքանչիւր վարկի մասին, և այն՝ ճիշդ ժամանակին և ոչ թէ նորա-Եւմտացոյցի—օրինական դադարման պահուն, ինչպէս կը պատահի սոյնիս և ինչպէս պատահեցաւ այս անգամ, որ պատիւ չբերեր Ազգ. Ժողովոյ անուան և իւր բարձր պաշտօնին:

Ուրիշ բան է եթէ սակայն Եւմտացոյց կոչուածն ահի և կամ քաղաքակրթեալ ազգաց լոկ հետեւողութեան համար է:

Յայնժամ հարկ կըլլայ ըսել թէ ամենայն ինչ որ Սահմանադրութեան շրջանակի մէջ կը կատարուի, յուսախաբութիւն է, և իբր իրականութիւն կը մնան անհատական ջանքեր և բարերարութիւնք միայն, որ ստուգիւ միտարարական են, թէ և անդին սահմանադրապէս ընտրեալ Պատրիարք, Ազգային Ժողով, վարչական Ժողովներ, տեսուչ խորհուրդներ և Պատրիարքարան ունինք, որոնց ամենքն ենթարկեալ են ձեւակերպութիւններու, որոց հովանիին ներքեւ—Ժող ներուի մեզ ըսել—կը գործուն զեղծում, անկանոնութիւն, կը կատարուին քմահաճոյք և կ'ապրին ընդհանրապէս Խառն համար պաշտօնեայններ, այլ հազիւ նշմարելի են պաշտօնեաներ, որ ճշմարտապէս լինին գործին մարդը՝ փայլեալ արժանեօք և հմուտութեամբ:

Խօսինք ըստ կարգին նաեւ կրօնական Տեսչի, Հովուական Եւրոպական և այլ վարկերու վրայ՝ հետըզհետէ:

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Գոհութեամբ կը հրատարակենք հետեւեալ նուիրատուութիւններն որ եղած են ի նպաստ Ազգ. Հիւանդանոցի վերաշինութեան:

Ազնուա. Ստեփան և Թադևոր էֆէնտիք Սպարթալեան 200 ոսկի:

Մեծ. Գ. Կիւտիւկեան էֆ. 200 ոսկի:

Առաջնորդութեամբ Մեծ. Յ. Կիւտիւկեան էֆէնտիք, Օսմանի ազգային 107 ոսկի հանգանակած և Պատ. Հոգաբարձութեան ղրկած են:

Նոյնպէս, հիւանդաց համար 200 մահճակալ ապսպրուած է յեւրոպամահիճներով և ամեն կազմուածքով:

Այս գնման համար պէտք եղած իբր հինգ հարիւր ոսկւոյ գումարին կէսը նուիրած է Ազնուա. Միքայէլ էֆ. Յակոբեան և կէսը Ս. և Ս. Կիւլպէնկեան տունը:

ՆՈՐԱՎԵՊ

ՇԻՐՄԻ ՄԸ ՇՈՒՐՁ

Բ.

Մի քանի օր վերջ կը հասնէր Ազգ. Սահմանադրութեան տարեդարձն յ'Ետի-Գուլէ. հոն էինք դարձեալ. Բերացի նորատի ազնիւ տիկին մը, որ առաջին անգամ լինելով կուգար տեսնել սոյն հանդէսը, կ'ընկերանար մեզ իւր ամուսնոյն հետ. պարտիզին մէջ սակաւ ինչ հանգիստ առնելէ յետոյ, սոյն տիկինը խնդրեց ինձմէ որ տանիմ զինք այցելել Պատասպարանին սրահներն, որոց վրայ գաղափար չունէր բնաւ. կսմովին ընդունեցայ իւր առաջարկն և երեք ընկերուհիներովս մտայ Հաստատութենէն ներս: Բայց, դժբախտութիւն, չէնքին հնութեան և խուռն բազմութեան պատճառաւ, նոյն օր բացարձակ արգելք կար այցելելու Հիւանդանոցը. չյուսահատեցայ. ազնիւ Տնօրէնին դիմեցի բացառիկ արտօնութիւն մը խնդրելու համար իրմէ, ըսի իրեն թէ սոյն խնդիրս չմերժելով, մասնաւորապէս գոհացում տուած պիտի լինէր Բերացի ազնիւ տիկնոջ մը փափաքանաց, որ առաջին անգամ կայցելէր Ետի-Գուլէ և կուգէր պատեհութենէն օգուտ քաղել հանուրց սիրելի Հաստատութեան բարեկարգ վիճակն ի մօտոյ տեսնելու համար: Մեծարոյ Տնօրէնը, չափազանց քարեսիրտ, ոչ միայն չզլացաւ սոյն շնորհն, այլ բարեհաճեցաւ առաջնորդ մ'եւս կարգել մեզ, բարեկիրթ պատանի մը, որ մանրամասն և կարեւոր բացատրութիւններ կուտար իւրաքանչիւր սրահին վրայ, ուր զմեզ կ'առաջնորդէր. նազելի տիկինն, որոյ ամուսինն յորդորած էր զինք Հիւանդանոցն այցելելու տխուր հետաքրքրութեանը գոհացում չտալ և վերջապէս չէր ուզած մեզ ընկերանալ. չափազանց դիւրայօղ, մի քանի սրահներու ալցելու թենէ վերջ, չէր կամենար այլ եւս շարունակել. այլ պէտք էր տեսնել Ազնիւն. այն զուարթ աղջիկն, որ պահ մի առաջ իւր զուարճալից և նրբամիտ դիտողութիւններով կ'զբօսցնէր զմեզ ի պարտէզն, բուրովին կը կերպարանափոխուէր. կը լինէր այնպէս որպէս կուգէի որ լինէր. սոյն տխրաբոյր յարկերու տեսարանն ոչ նուազ կը յուզէր զինք. այն աստիճան գունատ, շիկազէմ էր մինչ զի պահիկ մը կը կարծէի թէ նէ եւս պիտի համակերպէր մեր հիւր տիկնոջ փափաքանաց. այլ, ոչ. արի գտնուեցաւ, լեզուոյ բաժակը ցմբուր խմել ուզեց և շարունակեցինք մեր սրտամօրմօք պոյոյթը. զուարթութիւնը թանկագին բարեմասնութիւն մ'է կնոջ համար, ստոյգ է, բայց իմ կարծեօք. լրջութիւնն ոչ նուազ. և այդ միջոցին որքան խոհուն, ծանրագլուխ էր Ազնիւ, հապա այդ կարեկցութեան խօսքերն, համբերատարութեան յորդորները, ցաւակցական հարցումները, զորս իւր սիրուն շուրթերը կուղղէին հիւանդներուն, ծերերուն, վիրաւորներուն, ուրկից ըստացած էր այդ փորձառութիւնը. գողցես գթութեան քոյր մ'էր եղած բոլոր կենացը մէջ. իտալիոյ Մարկա. ըստ թագուհին լաւագոյն տպաւորութիւն մը չպիտի կրնար թողուլ ու է հիւանդանոցի մէջ. այո՛, այդ օր, պատասպարեալներէ բաղուծ յուզուեցան, օրհնեցին և իբր միտարութեան հրեշտակ նկատեցին զինք. և զարմանալի չէ այս, զի շատեր այնպէս կայցելեն սոյն գթութեան յարկն, որպէս պիտի այցելէին կենդանաբանական պարտէզ մը, անտարբեր, արհամարհոտ հետաքրքրութեամբ մը. նախահոգութիւնն ունեցած էինք համադամներու և ծխախոտի պաշար մ'առնելու մեր հետ, զորս Ազնիւ անձամբ կը բաշխէր. իւր տխրութիւնը դադարեցնակէտին կը հասնէր, երբ կայցելէինք հիւանդ մանուկներու սրահն և արդարեւ, ո՛վ մինչ իւր սրտին խորերը չպիտի յուզուէր ի տես սոյն մատղաշ չարաբաստիկներու. սոյն տըխրաղեցիկ ապաստանարանին միջոց, լորտին մէջ ապրիլ չէր բաւեր իրենց,

պէս չէր ուզած մեզ ընկերանալ. չափազանց դիւրայօղ, մի քանի սրահներու ալցելու թենէ վերջ, չէր կամենար այլ եւս շարունակել. այլ պէտք էր տեսնել Ազնիւն. այն զուարթ աղջիկն, որ պահ մի առաջ իւր զուարճալից և նրբամիտ դիտողութիւններով կ'զբօսցնէր զմեզ ի պարտէզն, բուրովին կը կերպարանափոխուէր. կը լինէր այնպէս որպէս կուգէի որ լինէր. սոյն տխրաբոյր յարկերու տեսարանն ոչ նուազ կը յուզէր զինք. այն աստիճան գունատ, շիկազէմ էր մինչ զի պահիկ մը կը կարծէի թէ նէ եւս պիտի համակերպէր մեր հիւր տիկնոջ փափաքանաց. այլ, ոչ. արի գտնուեցաւ, լեզուոյ բաժակը ցմբուր խմել ուզեց և շարունակեցինք մեր սրտամօրմօք պոյոյթը. զուարթութիւնը թանկագին բարեմասնութիւն մ'է կնոջ համար, ստոյգ է, բայց իմ կարծեօք. լրջութիւնն ոչ նուազ. և այդ միջոցին որքան խոհուն, ծանրագլուխ էր Ազնիւ, հապա այդ կարեկցութեան խօսքերն, համբերատարութեան յորդորները, ցաւակցական հարցումները, զորս իւր սիրուն շուրթերը կուղղէին հիւանդներուն, ծերերուն, վիրաւորներուն, ուրկից ըստացած էր այդ փորձառութիւնը. գողցես գթութեան քոյր մ'էր եղած բոլոր կենացը մէջ. իտալիոյ Մարկա. ըստ թագուհին լաւագոյն տպաւորութիւն մը չպիտի կրնար թողուլ ու է հիւանդանոցի մէջ. այո՛, այդ օր, պատասպարեալներէ բաղուծ յուզուեցան, օրհնեցին և իբր միտարութեան հրեշտակ նկատեցին զինք. և զարմանալի չէ այս, զի շատեր այնպէս կայցելեն սոյն գթութեան յարկն, որպէս պիտի այցելէին կենդանաբանական պարտէզ մը, անտարբեր, արհամարհոտ հետաքրքրութեամբ մը. նախահոգութիւնն ունեցած էինք համադամներու և ծխախոտի պաշար մ'առնելու մեր հետ, զորս Ազնիւ անձամբ կը բաշխէր. իւր տխրութիւնը դադարեցնակէտին կը հասնէր, երբ կայցելէինք հիւանդ մանուկներու սրահն և արդարեւ, ո՛վ մինչ իւր սրտին խորերը չպիտի յուզուէր ի տես սոյն մատղաշ չարաբաստիկներու. սոյն տըխրաղեցիկ ապաստանարանին միջոց, լորտին մէջ ապրիլ չէր բաւեր իրենց,

հիւանդութիւնն եւս կը չարչարէր զիրենք. իւրաքանչիւրին սնարին վերեւ արձանագիր մը կուտար մանկան ա նունն, հիւանդութիւնն և թէ ո՞ր թը-ւականէ ի վեր անկողնոյ կը ծառա-յէր. կային որ տարիներէ հետէ կը տառապէին և նոցա մէջ քանինքն կային, սիրուն. հանճարեղ նայուած-քով. ո՞վ կրնար իւր վարած կենաց, որչափ համեստ լինէր այն, սոյն մա-հասարակութիւններուն ի տես ցունց չէին և փառք չտալ իւր կացութեան. այլ կարի երկար կը լի-նէր սոյն թախծագին պտոյտին ման-րամանութիւններն ի գիր առնուլ աստ. մանաւանդ զի անի զմեզ պիտի հեռացնէր յոյժ այն նիւթէն, որոյ հա-մար գրիչ ի ձեռին առած եմ. լռիկ-մահահամոյր կերպարանօք կը թող-ուինք սոյն վշտերու վառարանը. չէ-ինք մոռնար սակայն ջերմ շնորհակա-լիք յայտնել մեր առաջնորդ ազնիւ պատանւոյն, որու մօտ մեր ըրած բոլոր թախանձանքներն անօգուտ կը մնային նուէր մ'ընդունել տալու հա-մար և կրկին կը դիմէինք պարտէզն. անդ տիրող ոգեւորութիւնն. յօժա-րութեան ձայներն և դիմաց ժպիտնե-րը՝ նոյնքան հաճոյս-թիւն կը թուէին մեզ ուղղեալ դիմացի լալաբէմ յարկերուն:

Մեր տխրութիւնը կը տոկար բա-ւական ժամանակ, այլ ամենքս ալ ե-րիտասարդ էինք և հանդիսին ոգե-ւորութիւնը տակաւ առ տակաւ կըր-կին կը փոխանցէր ի մեզ: Սակաւ ինչ յետոյ, մեր Բերայի բարեկամուհին իւր ամուսնոյն հետ կառքով կը հե-ռանար հանդիսավայրէն և մենք մեզ կը մնայինք. և կսկսէինք շրջագայիլ պարտիզին մէջ նոր ընկերուհիներու հետ, որոց հանդիպած էինք. գերա-գոյն զուարթութիւնը չէր յապաղեր տիրելու մեր խումբին մէջ: Ազնիւ կը հարցնէր ինձ թէ տրապիզի առաջ ըմ-պելիք խմած էի երբեք և կուգեր որ հանդիսին շքասեղանին տրապիզին ա-ռաջ գարեջուր հրամցնէի իրենց. «ան-շուշտ հրապոյր մը կայ յայդմ, կըսէր ողորդիչ ձայնով մը, քանի որ գինե-տանց տրապիզներու առաջ հոծ բազ-մութիւն մը կանգ կառնու միշտ. և խմբովին կերթայինք գարեջուր պար-պել տրապիզին առաջ. ապա կը մը-տածէինք մեր մէկ բարեկամուհւոյն:

որ պարտ էր նոյն օր մեզ ընկերանալ և որ անակնկալ պատճառով մը չէր կրցած գալ, և նոյն հետայն նամակ մը կը խմբագրէինք նմա ուղղեալ, որոյ մէջ մեր զուարթութիւնները կը նկարագրէինք և զոր կստորագրէինք ամենքս ալ և կերթայինք յանձնել մէ-կու մ'որ պիտի կրնար նոյն գիշեր իսկ զայն տալ իւր հասցէին. յոյժ զուար-թօրէն կանցունէինք ամբողջ երեկոյն:

Այս վերջին զուարթութիւնը, զոր Ազնիւի հետ կատարելու բախտն () ունեցայ, սոյն հանգէսէն շաբաթ մը վերջ, ծովու վրայ գիշերային պտոյտ մ'եղաւ՝ լուսնի յոյսով, կրկին ինք փափաք յայտնած էր սոյն շրջագա-յութիւնն ընելու. մակոյլ մը կը վար-ձէին և, ընտանեօք հանդերձ, կը սուրային և խաղաղիկ ծովուն վրայ հազիւ քառորդ մը կը լինէր որ հոն էինք. Ազնիւ կուգէր թիավարել և իւր անոյշ ու համոզկեր ձայնով կը խնդ-րէր նաւավարէն որ հանգիստ առնուր և իրեն թողուր թիավարելու հոգն. այդ պահուն ուր նէ մեր մակոյկը կը վարէր, ես որ կրնամ յաւակնիլ ըսե-լու թէ շատ մը պաշտելի կանանց հետ տեսակցած եմ, կսքանչանայի իւր վը-րայ, լուսնին ոսկեճաճանչ շառաւիղ-ները կուգային բոլորել իւր փոքրիկ գլխուն շուրջ իբր լուսապսակ մը. իւր վառվռուն և գողտրիկ աչերը կը բող-բողէ իբր ճշմարիտ զոյգ աստղեր, ժպիտը շրթանց վրայ էր միշտ և իւր անվերջ, համակրայից և իմաստալից շաղկապութիւնը բերանաբաց կը բռ-նէր զմեզ. սակաւ ինչ յետոյ կուգէր նմանիլ այն նաւավարաց որք մէկ նը-տելով, մէկ ելնելով կը թիավարեն, և իւր սոյն եղանակ թիավարման կրն-կերացնէր «հօ, հօ» սիրուն բացա-գանչութիւն մը, զոր լսած էր, կըսէր, նոյն օրինակ թիավարողներէ. իւր քաղցրիկ ձայնը մեղեդիի մը տպաւո-րութիւնը կընէր մեզ. ի մի քան սոյն եզական աղջիկը կը հրմայէր զմեզ. մանրազնին քննութիւն մը թերու-թիւններ ի վեր կը հանէ միշտ, այլ որքան կը քննէի սոյն աղջիկը, նոյն-քանկատարելութիւն կը գտնէի ի նմա, նոյնքան մեծ կը լինէր հիացումս, և թիավարելով հանդերձ կը պատմեր մեզ թէ որչափ կը սիրէր ծովը, և մեք կը մաղթէինք իրեն նաւապետ ա-մուսին մ'որ աշխարհի շրջանն ընել տար իրեն:

(Գալ անգամ)

ՎՈՍԲՈՐԵՆ ՅԱՂԻԱԿԱՆ

Թափումնա կը սուլէ, երկաթը վեր պիտի քաշէ, կը քաշէ կոր, տէ հա՛, քաշեց. տ . . ի . . լ . . լ . . ա . . նիւները դառնալ սկսան, կը քաշէ, և ահա կը մեկնինք. մնաս բարով, ո՞վ վոս-փոր, մնայք բարեաւ (ո՛չ չեղաւ գրա-բար է, գետինն անցնի այդ գրաբարը. աշխարհաբար ոճով ըսեմ) մնաս բա-րով, ո՞վ վոսփոր, մնաս բարով, ի տե-սութիւն (ո՛չ, այս ալ գրաբար եղաւ) ի կրկին տեսութիւն (չէ՛, այս բոլո-րովին գրաբար է, բայց աշխարհա-բարը ինչպէս յարմարցնելու է. է՛, ինչ փոյթս, եւրոպական բառը կը գործածեմ ու ահա կը լմնայ կերթայ) մնաս բարով, ո՞վ վոսփոր, ատիէօ, ա-տիէօ,

Այս բացատրութիւնը շատ լաւ յարմարեցաւ իմ կուստոյիս որ ինձ նման Օրթագիւղցի ըլլալու պատիւը ունի, ինչպէս որ ես ալ թեթեւ նիւ-թերու վրայ գրելու պատիւը ունիմ, որմէ շատ կախորժիմ,

Շոգենաւը կերթայ. հարկաւ մենք ալ կերթանք. աչքս չորս կողմն է. կին կը փնտռեմ տեսնել. շոգենաւի մէջ եթէ կին չգտնուի, խիստ տաղտկալի կըլլայ ճամբորդութիւնը. կինը ընկե-րական աշխարհի զարդն է, փառքն է, ես իմ բոլոր ներշնչումներս անկէ կառ-նեմ. էօ՛ֆ, վեր վազէ, վազէ, յոգնէ, դադրէ, քրտնէ. խոնջէ, յօրանջէ. հեւա, շունջ ա՛ռ. մ'առնեմ, բոլոր ծակոճուկ նայէ, բայց, տէր Աստուած, աս ինչ փորձանք է. ո՞վ դժբաղդութեանս, կին չկայ, չկայ, և, վերջապէս, չկայ:

Գետինն անցնի ասանկ շոգենաւը, և ասանկ ճամբորդութիւնը, էօ՛ֆ, ինչպէս համբերել. անտանելի է այս. Հեռագիրը դարձեմ Արեւելքին. այո՛, բայց, ինչ ընել. կայարան չկայ, ինչպէս որ կին չկայ:

Արդ, կուսումնասիրեմ, կը քննեմ, կը լուծեմ ու կը վերլուծեմ խնդիրը և կը հասնիմ սա եզրակացութեան թէ, ուր որ կին չկայ, հոն կայարան չկայ. — ո՞վ կին, ո՞վ կայարան:

Բայց հարկ է զուարճանալ, ան-պատճառ զուարճանալ, թեթեւապէս զուարճանալ, իմ փափագս է զուար-ճանալ, և, վերջապէս, զուարճանալ,

թէ և առանց գեղուհիներու ներկայութեան զուարճանալն անիմաստ բան մ'է ըստ արդի քաղաքակրթութեան, կամ թէ ըսել, առանց կնոջ ներկայութեան, ամեն ինչ վայրենութիւն կը բուրէ, վայրենութիւն կը հօտի:

Մինչ այս և մինչ այն, երկու փոքրիկ սիրուն տղաքներ նշմարեցի, որ վենետիկ կերթային:

Այս անունը երբ ըսեցի, սիրտս գունտ ելաւ, ինչ ընել, վէնէտիկը, Միխիթարեանները ես չատ կը սիրեմ, ջերմապէս կը համակրիմ, և եթէ ձեռքէս գայ, ամեն բան և մինչեւ իսկ ազգային իրաւունք և արժանապատւութիւն անոնց կը զոհեմ իմ խեղճ, զոր ունիմ, է վենետիկն, Միխիթարեանները, որոնց կը պարտիմ իմ բոլոր կեանքս, էութիւնս, սեւաթոյր մազերս մօրուքս, աչքս, ընքուիս, մատներս գլխարկս, պատածս, բալթօս, ժիլէս և վերջապէս ամեն բան, թէեւ, ցաւալի է որ ատոնք ալ գրաբարեան են:

Ինչ կըսէի.— Հա՛ իրաւ, երկու փոքրիկ սիրուն տղաքներ էտուար և վահան որ ի բացակայութեան կնոջ, զիո չատ կ'զբօ ցունէին. կանչեցի քովս, մըտերմութիւն հաստատեցի անոնց հետ որ սակայն զրաբարեան էին և ասանք ըսելու տեղ՝ է աս կըսէին:

Բնական է որ պիտի զայրանայի և զիրենք լաւ մը յանդիմանէի, բայց նըկատելով որ անոնք ալ իմ խեղճ կը պաշտէին, ինչպէս ըսի, վէնէտիկի վանքը կերթային, սանձ դրի լեզուիս (ինչ մեծ առաքինութիւն) և գոհ եղայ, վասնզի իրենք ալ ինծի հետ մտերմացան և իրենց խաղերովն ու երգեցողութիւններովը մեզ կ'զբօսցունէին և ի բացակայութեան կնոջ՝ մեր տխրութիւնը կ'ամօքէին:

Այս երկու փոքրիկները մեծ ապագայ կը խոստանան, վասնզի վէնէտիկ կերթան Միխիթարեաններուն քով. ուստի իրենց գրաբարեան ըլլալուն կը ներեմ ինչպէս որ ներեմ եմ և կը ներեմ բոլոր Միխիթարեաններուն:

Ինչ որ վէնէտիկ չէ ինչ որ Միխիթարեան չէ, ինծի համար չեն ու ես անոնց համար չեմ ի բաց առեալ գեղեցիկ սեռը միայն որ իմ սրտիս մէջ առաջնակարգ տեղը կը բռնէ, ուստի չփոթութեան տեղի չտալու համար պէտք է որ ըսեմ թէ սիրտ և խոր-

հուրդներս կանանց, իսկ միտքս, բոլոր հիացումս և յափշտակութիւններս վէնէտիկի Միխիթարեանց:

Շոգենաւը Բիրէ մտաւ (Թահտապիթի հօրեղբորորդին չհասկցուի):

— Զեյթուններն ու նաւաստիները կը յարձակին շոգենաւին վրայ (ընթերցողները պիտի շուարին հիմա թէ ինչ կայ, ինչո՞ւ կը յարձակին, արդեօք պատերազմ կայ և կամ Կովկասեան հռչակաւոր Դիւարկ-թղթակցին գալը լսած ըլլալով զինքը ժամ առաջ տեսնելու համար արդեօք կ'աճապարեն.— անշուշտ այս վերջինն հաւանական լինել կը թուի):

Այդ շեյթուններն ու նաւաստիները Աթինա՛, Ակրօքօլիս կը գոչեն (փառք Աստուծոյ որ խնդիրը պարզուեցաւ):

Բոլոր ճամբորդքը կուզեն տեսնել Ակրօքօլիսը, բայց ես չեմ ուզեր և իմ այս չուզելս ամենուն զարմանք կը պատճառէ:

Արդէն իմ ուզածս ալ այդ է, այսինքն, կուզեմ, մանաւանդ թէ կը պահանջեմ որ իմ վրայ զարմանան, իմ վերայ խօսին, բայց հոգ չէ թէ ինչ կը խօսին եղբր, բաւական է որ խօսին: (Դալ անգամ)

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԽՆԴԱԼ ՈՒՋՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Դատարանի մը նախագահը, կը հարցունէ փաստաբանի մը:

— Ինչո՞ւ համար դժուարին և գէշ դատեր կ'ստանանք:

— Մինչեւ հիմա դիւրին և աղէկները կորսնցնելու տղ եւս որը ընտրելս չեմ գիտեր:

Կռուի մէջ մէկը սրունգէն գընդակով մը վիրաւորուելով հիւանդանոց կը փոխադրեն, բժիշկները շարաթմը շարունակ գնդակը գտնելու համար սրունգը կը ծակծկեն, վիրաւորեալը որ չատ կը տառապէր, բժիշկներուն ինչ զննութիւն ընելին հարցուց:

— Զեղ վիրաւորող՝ գնդակը կը փնտռեմք, պատասխանեցին:

— Վա՛յ չար սատանայ, այս առաջուց չըսէիք, գնդակը գրպանս է:

Տիկին Ե. Թ. անհանգիստ է, բարեկամներէն մին իրեն դեղ մը տալով:

— Գործածեցէք այս դեղը, որ շատ շուտ պիտի առողջացնէ զձեզ, արդէն բարեկամներէն միոյն տուի:

— Օգուտ տեսա՞ւ:

— Դեղը տալուս հետեւեալ օրը այցելութեան գացի, դուրս ելած էր:

— Դո՛րս ելած էր:

— Այո, Տիկին, ս. երբորդութեան եկեղեցին գացած էր ինքզինքը թաղել տալու համար:

Յուշարարի մը տետրին վրայ կարդացուած:

Դերասանուհի.— Դրեթէ երբեք դերասանին էգը չէ:

Տիկինը խոհանոց մտնելով:

— Մարիա՛մ. քեզի քանի անգամ ըսի որ կերակուրներուն արծաթեղէն չգործածես և առանց մոխի ընելու արծաթ դգալով կերակուր կը խառնես:

— Տիկին, պարապ տեղը կը բարկանաք, դգալը արդէն մօրսը չէ:

Լ. ԻՈՆ Շ,

ԵՐԿՆԱՅԻՆ ՎԻՃԱԿ

ՏՕԼՍԱ ԲԱՆԱՅԻՐԻ

Հինգշաբթի օրը Մատաթիա առաքելոյն վիճակաւ ընտրութեան, և միանգամայն Գարա աղանձի օրն կամ տօնն ըլլալով, շատեր. ըստ աւանդական ուղիւնութեան, ֆիլիք եաբրաղիով եփած ու պատրաստած էին օրհնան տօլման, զի նոյն տօն կոչի Տօլմա բանայիրի:

Զորեքշաբթի օրունէ տօլմայի պատրաստութիւն կար Գուժ գափու տան մը մէջ, որուն տանտէրն է մեծ ծապատիւ Ամբամբիոս աղան:

Սա նշանած է իւր աղջիկն գաւառացի երիտասարդի մը, որ ըստ բաւականին ունեւոր է:

Օրիորդ Զապէլ.— այս է Ամբամբիոս աղայի աղջկան անունը.— օր առաջ խօսք տուած էր իր նշանածին որ հինգշաբթի օրունան համար իր փափուկ

մատնեցողն համով հոտով—Գեր. Սրբ. ուանձտեանցի Համով Հոտովը չը հասկցուի—տօլմա մը դնէ—նոյնպէս կը խնդրենք որ կարգ մը հաշակաւոր ազգային հիներու տօլման չհասկցուի:

Խոնդիր մ'է թէ օրիորդ Ջապէլ իրօք ի՞նչ դրած էր տօլման. թէ իւր մայրն՝ հաճի Աղաւնի հանրմը. վասն զի զօքանջ ըլլալու հանդերձեալ տի. կիններ իրենց աղջկան մարիֆէթն և հիւնները փայլեցնելու մայրենի փառասիրութեամբ համադամ կերակուրներ կը հրամցունեն իրենց փեսացուին՝ հուտացնել փորձուելով թէ իւր նաշելի աղջկան խնամով պատրաստածն է, հոգ չէ եթէ սակայն քիչ ատենէն դաւաթին յատակն երեւայ, վասնզի բանը բանէն անցած է արդէն:

Հինգշաբթի առտու լիշեալ տան մէջ ամեն մարդ պատրաստուած էին Գարաղաճ երթալու համար:

Նաւավարը դեռ չէր եկած կերակուրներն ու մանր մունր բաներն ի նաւ փոխադրելու: Օր. Ջապէլ իր փոքր եղբայրը կը յանդիմանէր թէ առջի իշիկունէ ինչո՞ւ նաւավարին ապստարած չէր որպէս զի առտուն կանուխ գայ:

Օրիորդն իրաւունք ունէր անհանգիստ ըլլալու. վասնզի նշանածը նոյն օր խիստ կանուխ Գարաղաճ պիտի գտնուէր. ուստի իր ալ հոգին կը թրթռար կանուխ հոն գտնուելուն, որ հարկաւ դատաւարտելի փափագ մը չէ:

Վերջապէս, նաւավարն հասաւ իր ընկերովը:

Ամբամբիոս աղան նաւավարին ուշանալն երեսին դարնելու համար կէս մը ինդալով ըսաւ՝ նէրտէ՞ գալտըն ուստա Համբար, կիւնէշ եիւքսէլմէտէն սէրինտէ եօլա չըգալըմ:

—Ախ. հաճի աղաս, նա՛ր՛ սէօլէյիմ, գալըղըն չաթալընտան չամշաղը աշըրմըլար. կիւնահընը չէքէյիմ: Յղըուշա ալտըմ, իշտէ պու պիլիւր, տահա օն պէշ կիւն օլմատը... էյ պա. նատա եաղըզ արը, ախպար, չօլուգ չօճօղումա ազչամտան ազչամա իքի օգկա էքմէք ալաճագսամ. օ ալէթիմ ըլա ալաճալմ:

—Աման. ուստա Համբար, էրկան ըրիր, զաթը ուշ էկար, նաֆիլէ տաքերուն մնացինք:

—Մի՛ սրգոյիք, անամ պապամ,

բան մըն էր էղաւ, հանըմս... Մարտիկ, սէն շու սէլէյի գալտըն սըր. թըմա վէր պագալըմ... հա՛ չէօլէ. հայտէ խալըյը չիլթէյի տէ սէն ալ:

—Աղապա, հայտէ մենք ալ անոնց ետեւէն էրթանք:

—Էրթանք, գըղըմ, էրթանք... հաճի հանըմ, հայտէ, մենք Ջապէլին հետ կերթանք կոր:

—Դուք գացէք, իշտէ ես ալ Լեւոնին հետ ետեւնուգ կը հասնիմ:

Վերջապէս, նաւակը պատրաստուելով տմենքն ալ նստան և դէպի Գարաղաճ ճանքայ ելան:

Ցայը Համբար, հալա նասըլ. հարցուց Ամբամբիոս աղան:

—Ալահա էմանէթ, պիր շէյ եօգ:

—Եւ կէլէն սանտալը կէօղէթ, իւստիւմիւղէ կէլիօր:

—Ոչն գըրըրտամ:

Ջապէլ հանըմն ալ յարեց, քա վո՛ւյ մալուճան վրանիս կուգայ կոր:

—Տուք հիշ հոգերնիդ մ'ընէք. առաջ Աստուած պանիկ մըն ալ չիկայ:

Համբարի ախպար, պիրաղ տայանընտա շու գալապալըգտան չըգալըմ:

—Մէռաք էսմէ, հաճի աղա. եիր. մի պէշ սէնէ տիր պու զէնահաթը իշլէյօրում. թէօպէ պէօլիւք սէօղիւմէ, տահա գըլ գատար պիր գաղայա օղրամատըմ. պու տէնիղլէր պիր շէյմի. թամ տէօրտ սէնէ Գարաղաճիդ պօղազընտա իշլէտիմ:

—Գարաղաճիդ պօղազը պուճտան նէ՛ գատար սիւրէր:

—Պուճտան թամ 25 սահաթ տըր:

—Տէմէք քի վառնատան տա էօթէյէ:

—Եօգ, վառնա պօղազտան տիշարը տըր:

—Էվէլի կիւն օ թարաֆտան պիր եօլճումուզ վար ըտը կէլտի տէ, սօր. տուճըսա վառնատան Ուսամայօյա 12 սահաթ տըր տէտի:

—Չօգ եաղնըշ, պէնիմ զէնահաթըմ գալըքճը, պէն պիլմէյօրում, պիր տէֆա, րահմէթ օլտուն ճիւմլէ կէշմիլլէրին ճանընա, էօրտէկ Սէրչօ ըլա պօղազտան պիրաղ աշաղը Ագ-սարայ պուճնու վար, օնուն էօնիւնտէ պիր ֆուրթունայա թուլթուլուգ...

—Աման, սալարուրեաեա չաթըյօրուգ:

—Մօ Մարտիկ, սըլըրա, սուվուր:

եատան տայան. սաղտան քիւրէյինի...

—Հայ սէնի գայէքճու էտէնին բօյնի ալթընտա գալսուն, գալ տէֆա սէօլէտում թուլմատուն:

Աման մարիկ Աստուածածին, խաղաղ մէյմը իրերն օտք կոխէինք:

Մարտիկ, գայըղա չօգ զարար օլտու մը,

—Բօտօսլամաօր աշըլմըշ:

—Պարէ պէն լաղըրտըյա տալտըմ ըսա սէն կէօղիւնիւ արգանտա էտէյիտին:

—Պէնտէ սէնին լաղըրտըլարընա տալտըմ Պօղաղ ֆէնէրինի Գէօտէն. ճէտէն էօթէյէ կէօթիւրտին. Պօղաղ իշինտէ եէնիտէն պիր Ագ-սարայ իճատ էտտին, Հալըճը օղու էօնիւնաէ սու. վուրեաեա չաթմըլը, ալըպ մը տըր. (աւելորդ է հօս ըսել թէ նաւավար Մարտիկ ախպարը իր աշխարհագրական հմտութեամբ կրնայ արժանապէս աշխարհագրութեան դասատու ըլլալ փոխանակ կարգ մը վարժապետներու, որ անշուշտ մօռացմամբ Օրանկութանը Սիպերիա Սիպերիա և Մանչի նեղուցը ճիպրալթար կը տանին):

—Պէն սէնին կիպի գայըգճըլարը տահա չօգ սույա կէօթիւրիւպ սու. սուզ կէրի կէթիւրիւմ:

—Էյ աղնատըզ, պանա աթմա, պէն տօլմա եուլմամ:

Աստուծոյ սիրուն, մեղ հուսա հանեցէք տէ ետքը ինչ կուի պիտի ընէք նէ ըրէք:

—Հաճի հանըմ քուրուկս, տուն հիշ սիրտդ մի՛ հատցուներ, էվէլ Ալլահ, քիմսէնին պուճնու գանամատան կիտէրիդ:

Հուսկապա, նաւավարները կուիւնին վերջացնելով թիւովարել սկսան և կէս ժամ վերջը, առանց ուրիշ պատահարի, հասան ի Գարաղաճ. ուր մենք ալ պիտի առաջնորդենք մեր ընթերցողներն հանդիսատես ըլլալու համար այն տեսարանաց, որ ոչ նուազ հետաքրքրական չեն, և որոց մասին մարդ գաղափար մը կազմելով կրնայ վերահասու ըլլալ թէ քանայի կոչուածն որպիսի այսանդակութիւններու վերաբերող զրօսավայր է, ուր երթալու կ'զգուշանան ի հարկէ պարկեշտ և պատուաւոր երկսեռ անձնաւորութիւնք:

(Գալ անդամ)

«Հախալ օնորա ըստ արեւելի պարսկա լեզու»

—Օ՛հ, ալ մերաքիս տպաւ. խայրի տիմանալու բան չէ աղպար:

—Ի՛նչ է ան, կոմիկ աղայ, ի՛նչ կ'ո՞յ

—Ի՛նչ պիտի ըլլայ. մենք հացի փարայ կը մտածենք. ասի հերիք չէ մէյ մ'ալ գիրքի փարա մտածէ. աման պէ, ալ պիտի չեղայ, ասանկ էրթայ նէ, կամաց կամաց չօճուիլը դրպոցէն պիտի հանեմ. չնայի՛ս, կարդալ սորվող. ները սանքի պա՛ն մը եղեր են:

—Կոմիկ աղայ. քանի որ չօճուիլին հայրն ես, անոր կրթութեանն ալ պարտաւոր ես, տարին մէկ երկու անգամ տասը կամ քսան զրուշ գիրքի փարա պիտի տաս, ասկէ ի՛նչ կելլէ քի, էօ՛հ փիւֆ կընես:

—Պէ արագար չես գիտեր, աս հաֆթա սէքիզ կիւն օն տօքուզ Միհրանիկս կը տնկուի, հայրիկ:

—Ի՛նչ է ան, դաւակ:

—Մեր վարժապետ միւսին ըսու քի . . .

—Կէնէ բա՛ն ըսաւ ձեր վարժապետ միւսին:

—Հա՛ հայրիկ, նոր գիրք մը շիներ է, ամէնքտ ալ մէյ մէկ հատ պիտի առնէք ըսաւ, չառնենք նէ, միւսին մեզ չսիրեր հայրիկ:

—Պէ ճանըմ այդ միւսին վարժապետ է, չէնէ քիթապճի, գիրք շիներ է, ո՞րին հոգը. կուզեմ կառնեմ կուգեմ չեմ առներ. իշտէ ասանկ չաբաթը մէյ մը չօճուիլը կուգայ, կը խնդրէ, կաղաչէ, չեղաւ նէ կուլայ, էն նիհայեթ չարեա կը հատնի, քանի զրուշ է նէ, կը ճարեմ կուտամ, ան չաբթուն կաղաւթիմ, եկու չաբթու թաղէն կուգայ, դու էղիր տէ գիմացիր:

—Կոմիկ աղայ ինչ ընենք պէտք է քի կուզուի կոր:

—Ձէ տխար չէ, գիրք մը շիներ է չծախուիր, ով գիտէ, զահէր բանի եւրար չէք չեն առներ կոր լսածիս նա. յեղով կէօյա սըկէ նըկէ ժողվեր է տէ, գիրք մը շիներ է, ի՛նչ զահմէթ:

Հէմ կըսեն քի, պարէ թըպիւր թըպիւրեա ժողվեր նէ, նէ իսէ, ելեր է տէ իր չհասկցած բաները կէօյա հաս. կցողի պէս «սա՛ սա ըսել է, նա՛ նա ըսել է» ըսելով ծուռ ուժուռ բա. ներ գրեր է. էյ ախպար չհասկցած բանը մախսըմ չօճսըմ ի՛նչ պիտի հաս. կնայ:

—Կոմիկ աղայ հոգ չէ ծուռ ուժուռ, գիրք չէ՛ մի կը կարդացուի խնծորին չիւրիւկը չո՛ւտուիր կըսեն ամա, չարնաչար կուտուի. աս ալ անոր պէս բան մ'է:

—Պէ ճանըմ կարպիս. ատանկ չէ, ես խօսիմ դուն հախ տուր:

—Խօսէ նայինք.

Տղաս 5 տարի է դպրոց կերթայ տահա շէնք շնորհք սաղմոց մը չկրնար կարդալ, աս հինգ տարին մէջ ես սուտ ըսեմ, դուն իրաւ, հէմէն 50 կը. տոր գիրք առած եմ, ամէնքն ալ սափ սաղլամ գիրք են:

—էյ տղադ չկարդար:

—Ձէ՛ պէ ճանըմ, ի՛նչ պիտի կարդայ, նայիս տղաս կուգայ քի այս ինչ քերականութիւնը պէտք է. կառնենք. ամիս մը կանցնի նորէն կուգայ «հայրիկ միւսին փոխուեցաւ, նոր միւսիւ մը եկաւ, աս քերականութիւնը չըլլար ըսաւ. իմ քերականութիւնս կայ անկէ պիտի առնէք» ըսաւ ասանկ շատ մը «միւսին գնաց. միւսին եկաւ միւսին ըսաւ» ներ լմնալիք չունին. տղան գիրք փոխելէ, ես ալ փարա տալէ ալ պիտի չեղանք:

—Կոմիկ աղայ քու խօսքէդ ես անանկ կը հասկնամ քի, մեր տղայք վարժարանին մէջ բան սորվելէ աւելի գիրքերու անուն կը սորվին:

—Հա՛, եա, ուրիշ բան չկայ:

—Ձկայ կըսես ամայ պիւթիւն կաղէթաները կը գրեն քի, այս ինչ վարժարանի տղայք սանկ յառաջագէմ, նանկ յառաջագէմ եղան,

Ան խօսքերուն մի հաւատար պէ. սղորմած հոգի հայրս, Աստուած լուսաւորէ հոգին կրօնք քի, օղլում տաւուլուն սէսի ուղաքտան էյի կէյիր ամա. եանընա կիտէրսէն, կէօրիւրիւն քի օնուտա չօմաք իլէ վուրուրլար: Դուն ասանկ թէլլալի խօսքերու մի հաւատար: Մարդուն մէկը ժամանակին պարծենցեր է ըսելով «պէն Հալէպտէ իքէն, իւշ արչըն եէր աթլար ըտըմ» անոր արխատաշն ալ աս սուտը չկլլելով, ըսեր է քի, «գալգ աթլա պագայըմ, Հալէպ օնտա ըսա արչըն պունաա տըր» հիմայ կաղէթաները անանկ կը գրեն նէ, մեր զաւակները օւթան են եա, պօշ լախըրտը չեմ ու.

գեր խայրի, սուս բան մըն է կերթայ. թող տուր քի երթայ.

Պապա Թորիկ, ինծի խելք մը սորվեցուր. շաշըմիշ ըրեր մնացեր եմ:

ՍԱԼԹՈՆ

Մ Ա Ս Ք Ն Ո Ր Ք

ՀԱՅ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ

Կ Ա Մ

ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Բարեկիչատակ բանաստեղծ Տօթէոր Ներսէս Մեղպուրեանի հեղինակած պատկերազարդ սոյն ընտիր Քերական-Հեգար բան-Ընթերցարանն. որ իւր պարունակաբարոյական գեղեցիկ խրատներով յոյժ օգտակար հանդիսացած է մանկանց. 14 անգամ իւրոյս ընծայեալ է բիւրաւոր օրինակներով: Սակայն այժմ սպառած լինելով. ի խնդրոյ տեղացի եւ գաւառացի բազմաթիւ ազգայնոց՝ վերատպուած է տոկուն թղթով եւ հաստատ կազմով. յատկանան լով 100 ին 10 խափաղի Գալֆաեան Որբանոցին:

Կը ծախուի բոլոր Հայ գրաւաճառաց եւ ջրավաճառ Պողոս եւ Յակոբ աղաներու խանութները:

Դին 1 զրուշ

Մէջ վաճառարանն եւ գործարան լաւապէս եւ այն

նիւնոց: Ալեքս համաճ ըն 16 Բէշ:

Բէլէնէլէր

ՏԵՐՐ ԵՒ ՏՆՕԷՆ Յ. ՉԱԽՄՇԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ իւր վաճառատան մէջ կը շինուին եւ կը նորոգուին կոտրած, փշասուած, աւրուած եւրոպական ամէն տեսակ գործիք. ինչպէս կաղի կամ իւղի լամպաներ. աշտանակներ. անկողնարանք. չիբիկաներ. տուշեր սամաւարներ եւ յալաճապակեայ կոտրած որ եւ է նիւթեր. ըստ ամենայնի, մաքուր վայելուչ եւ նորէն աւելի հաստատուն:

Նաեւ, սոյն վաճառատան մէջ կը գտնուին, եւրոպական ընտիր լամպաներ, աշտանակներ ընտիր օպակի խողովակներ որոց համար հասարակութիւնը միշտ կը գանգատի թէ չկան

ՄԱՅԻՐ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸՆԸՆ ՐՈՒՊԱ ՄԱՂԱՋԱԼԱԸԸ

ՊԵՅՈՂԼՈՒ ԹՈՒՆԵԼ ԳԱՐՇԸՍԸ
ՍՏԱՄՊՈԼ ՔԵՕՓՐԻԻ ՊԱՇԸ



աստ: կյօպներ: և ամէն տեսակ պաա-
րոյկներ, մէկ խօսքով, լանպայի վե-
րաբերեալ ամեն բան ինչպէս նաեւ-
պանեօ և չինկոյէ յուացարաններ և
տուշ ընելու համար պէտք եղած ա-
մէն կերպ գործիք:

Գիները յոյժ չափաւոր են. զի մեր
գործարանի սկզբունքն է ՃՇԴՈՒԹԻԻՆ
ԵՒ ՀԱՒԱՏԱՐՈՒԹԻՒՆ:

***—Փորձով գիտեմք և բնաւ տա-
րակոյս չունիմք թէ յիշեալ ճարտա-
րարութեամբ ազգայնոյն գործերէն մե-
ծապէս դո՛հ պիտի ըլլան մեր ազգա-
յինք և այլ եւս իւրեանց, այս կարգի
պէտքերն հոգալու համար սիրայօժար
պիտի գիտնն նոյն վաճառատուն և
գործարանը, փոխանակ այլ տեղեր
յաճախելու, մինչ սա վստահութեան
ամէն պայման կ'ընծայէ իւր յաճախոր-
դաց:

Օ՛ն ուրեմն, գիմեցէք անդ և փոր-
ձեցէք:

Պէտքիւք ատամլար, գարըլար, տէլիգանլըլար, գըզլա
վէ չօճուգլար իչիւն հազըր վէ ըմարլամա էնվայի բուպա-
լար, ֆանէլլար, շէմսիյէլէր, էլտիվէնլէր վէ զայրիհիւմ վէ
զայրիհիւմ:

Հէր օն պէշ կիւնտէ մէվսիմէ մախսուս մօտա մալլար վիւ
րուտ իտէճէք տիր:

Սաթըլան մալլէրին քեաֆֆէսի պիրինճի վէ տայանազըլ
վէ տիւզկիւն մալլար տըր:

Մայէր գումբանեասընըն գախտէսի տայմա «էթի վէ էշ
վէն ՄԱԼ ԱՍԹՄԱԳ» տան իպարէթ պուլունմուշ օլտուղը
պիր զիյարէթլէ մաղազամըզը թէշրիֆ իտէն բաղպէթլու
միւշտէրիլէր կէօրէճէքլէր տիր:

Շիւպէ

Շիւպէ

ԻՍԲԷՆՏԵՐԻՑԷ ՎԷ ԳԱՀԻՐԷ

ԻԶՄԻՐ ՎԷ ՍԷԼԱՆԻԿ

Հայտէյին պագալըմ ՄԱՅԻՐԷ՛

— 12 —

նուն մը չկրցաւ գտնել իւր հայրն: Բայց իւր
յիշատակները պրպտելով, յիշեց թէ շատ ան-
գամներ Սէօյեօնի հողին վրայ տեսած էր ան-
ժանօթ երիտասարդ մը կասկածելի երեւոյ-
թով և քաղաքացւոյ մը համազգեստով:

Յիշեց թէ՛ կիրակի օր մը աղջկանը հետ
Ֆուէմիքուռի եկեղեցին գնացած միջոցին պա-
տարագի արարողութեան ժամանակ տեսած էր
միևնոյն անձանօթն և սեամի մը վրայ կեցած
էր, իրմէ քանի մը քայլ հեռի: Արարողու-
թենէն վերջ, նոյն անձանօթը տեսած էր եկե-
ղեցիէն դուրս և նշմարած իսկ անոր հետ աղ-
ջկան միջեւ, փոխանակուած ակնարկ մը:

Այդ ակնարկին յիշատակն, որուն նոյն մի-
ջոցին կարեւորութիւն իսկ տուած չէր, այժմ
իւր բովանդակ պայծառութեամբն միտքը կու-
գար: Յայտնութիւն մը:

Այլ եւս տարակոյս չկար. այն երիտասար-
դը զոր չէր ճանչնար, մեղսակիցն էր, իւր աղ-
ջկին հրապուրողն:

Այս մտածման հանդէպ, արիւնը կ'եռար
երակացը մէջ, բարկութիւնը կը տիրապետէր
իւր վրայ և սրտին մէջ արդէն կզգար ատելու-
թեան և վրէժխնդրութեան տենջանքներ:

— 9 —

Բայց մարդը կ'առաջարկէ և Աստուած կը
կարկադրէ, կ'ըսէ առաժն:

Ժաք Մէլիէ պիտի տեսնէր թէ շատ անգամ
երազն ո՛րքան հեռի է իրականութենէ:

Գիշեր մը, ժաք Մէլիէ, ջերմութեան սաստ-
կութենէն յանկարծական նեղութիւն մ'զգա-
լով՝ անկողնէն վեր ցատկեց և բացաւ իւր սե-
նեկին պատուհաններէն մին որ ագարակին պար-
տիզաց վրայ կը նայէր:

Մթնոլորտը թանձր էր, բայց փոթորկի ըս-
պառնալիք չկար երբէ՛ք: Պլպլացող աստեղօք
լուսազարդ երկնակամարին վրայ ամպ մ'իսկ չեր
երեւեր: Մերթ ընդ մերթ փայլակի մը դեղ-
նօրակ լոյսը կ'երեւէր հորիզոնին վրայ: Յիրաւի
գեղեցիկ գիշեր մ'էր, զով, խնկաբոյր և ֆօս-
ֆօրական՝ նդկական երկրաց գիշերաց մի-
ոյն նման: Տերեւ մ'իսկ չէր շարժեր, ծառե-
րն անշարժ էին: Միայն, գորտերն իրենց մե-
լամաղցիկ և միօրինակ ճիչը կ'արձակէին բարձ-
րաբերձ խոտերուն վրայէն:

Ագարակապետը նոյն պահուն լսեց ֆուէ-
միքուռի հասարակաց ժամացոյցին հնչիւնն որ
կէս գիշեր կը հնչէր:

Վայրիկ մը գիշերուան խնկաբոյր օդը շըն-

ՅՈՎԷԼ Կ. ԿԱՐԻՆՆՈՆ

Քեօնիւր վէ հախաղ արեթօղիեցաւ

Մէջքիւր տէրօ Ծրնտրդլուտա Գէրէս-
թէճի սօգաղընտա տէնիզ սահ լինտէ
18 նիւմէրօ իլէ միւրազիւսա օլուպ:
պու տէֆա մատէն սօպալար իլէ գու-
զինօլար իշիւն տիկէր քէօմիւրլէրա: Եւ
տահա էնվէն վէ դաեէթ տահ նազլու
գօգ քէօմիւրիւ կէթիւրիւմիւ տիւր վէ
այա ճինտէն մանկալ քէօմիւրիւ վէ
սօպա վէ չամաշըր իշին տալիս մախ
սուս քէսիւմիւր ալէա օտուն Փիրուխթ
խաիւմէքաէ տիւր: Վէ քէպալիք Շէշլի
վէ Նիւանթաշը վէ Ֆէրիքէօլիւ էնալի
պինէ պիւր սուհուլէթ օլմագ իլին:
Բանկալթիւտէ Պիւնիւքսէրէ ճատտէս/ն
տէ համմամ գարշըրլուտա 48 նիւմէրօ
իլէ միւրազիւսա պիւր չիւպէ քիւշաւ
խաիւմիւր օլտուղու բազպէթլու էնալիքէ
իլան օլունուր:

ԼԵՍԲԵՐԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ԸՆԴԴԵՄ ՀՐԴԵՀԻ

Արտօնեալ Դրամագլուխ ֆր.	10,000,000
Ստորագրեալ	1,000,000
Վճարեալ	864,000

Ընկերութիւնս կապահովագրէ ընդդէմ հրդեհի ամեն տեսակ կալուած-
ներ, կարասիք, մթերանոցներու և վաճառատանց մէջ գտնուած ապրանք-
ներ՝ խիստ զիւրամատչելի պնդով և ամենաշահաւոր պայմաններով:

Ընկերութիւնս մեծագումար գործեր կարենալ ապահովագրելու համար
միացած է Եւրոպեան չորս կարեւոր ընկերութեանց հետ՝ որոց Դրամագլ-
ուխը 'ը հասնի առաւելքան 16,000,000 ֆրանքի:

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար զիմել ի պրասեկտա Ընդհանուր
Գործակալութեան, ի Պօլիս, Պանճէ Գալու, ճէշլու պէյ խանի ճիշտ դէմ
թիւ 21-22:

Ընդհանուր Գործակալք բովանդակ Թուրքիոյ

ՍՍ.ՀԱԿ ԳՍ.ՏԻՖ ԵՒ ԸՆԿ.

— 10 —

չելէնյետոյ, կը պատրաստուէր անկողին մըտ-
նելու երբ իրեն այնպէս երեւցաւ թէ ստուերի
մը շարժիլը կը տեսնէր այգեստանին ծառոց
ճիւղերուն տակ:

Դուրսը պատուհանին յենած՝ ահանջ դը-
րաւ և մոիկ ըրաւ:

Ստուերը կը մօտենար, թեթեւ քայլի մը
աղմուկը մինչեւ իրեն հասաւ. և դեռաբոյս
ինձորենիներուն մէջտեղ ստուերանկար մը տե-
սաւ: Զգուշական միջոցներով կը յառաջանար
անժանօթն, իբր թէ չէր ուզեր որ զինքը տես-
նէին:

Պարտիզին կողմէն դռնակ մը բացաւ և տա-
նը մէջ մտաւ:

Ժաք Մէլիէ յետս ընկրկեցաւ մինչեւ իւր
սենեկին խորը, աչերը շփելով կարծես ապա-
հով լինելու համար թէ՛ արթուն էր իւր աղ-
ջիկը:

Պահ մը անշարժ մնաց, աչերը բաց, բա-
զուկները ձգած, առանց մտածման, արձա-
նացեալ էակի մը նման: Իւ վերստանալով իւր
կարողութիւններն, սարսափ և դուշեց:

— Ինչ կը նշանակէ այս:

Գունատ էր և պաղ քրտինք մը կ'ողողէր

— 11 —

իւր ճակատն: Սենեկին դրան կողմը գնաց.
բայց զայն բանալու վայրկեանին կեցաւ: Ահաւոր
մտածում մը իւր ուղեղին մէջ ծնունդ առած
էր:

Իւր աղջիկը գիշերները գաղտնի ժամագ-
րավայրներու կ'երթար, իւր աղջիկը կը խաբէր
զինքը:

Ինչ ահարկու յայտնութիւն հօր մը հա-
մար: Եւ այդ բանին պէտք էր հաւատալ. ու
րովհետեւ չկար բան մ'որ կարենար արդարա-
ցնել Լիւսիլի գիշերային պտոյտն:

Աթոռակի մը վրայ ինկաւ, և գլուխը ձե-
ռացը մէջ առնելով խորին մտածմանց մէջ ըն-
կղմեցաւ:

Արդեօք տարակուսած դժբաղդութիւնը
կատարեալ էր: Մինչեւ ո՛ւր իւր աղջիկը տա-
րած էր իւր պարտուց մոռացումն: Ինչ ահ-
ռելի անդունդի մը վրայ կը քայլեր դժբաղդ-
տոյնը: Եթէ Լիւսիլ միամտաբար դրժած էր
իւր պարտուցը դէմ, տարակոյս չկար թէ պի-
տի գտնէր ինքզինք երկրորդ մեղապարտու-
թեան մը մէջ: Փնտռեց թէ ո՛վ կրնար լինել
թշուառականն որ լանդզնած էր սպառնալու
իւր հանգստեան, իւր պատուոյն դէմ: Ա-